ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացի Ալեքսան Ալեքսանյանից

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան
«05» մայիսի 2026թ.

ԻՐԱԶԵԿՈՒՄ
/հանրային հավաքի անցկացման վերաբերյալ/

Հարգելի՛ պարոն Ավինյան,

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ:

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

1. Հավաքի վայրը՝ Հաղթանակի զբոսայգի /Մայր Հայաստան արձանի հարևանությամբ/ - Կարապետ Ուլնեցի փողոց 15

2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2026 թվականի մայիսի 08-ին ժամը 19:00-22:00

3. Հավաքի նպատակը՝ Հայաստանի Հանրապետության ներքաղաքական և նախընտրական հարցերի քննարկում:

4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ 10.000 /տասն հազար/ անձ:

5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ Հավաքների ազատության սահմանադրական իրավունքի իրացման ամենաարդյունավետ և նույնիսկ հենց Սահմանադրությամբ հիշատակված բաթոթյա տարածքում տվյալ դեպքում իրազեկման ենթակա հավաքը իրացվելու է նաև անհրաժեշտ սարքավորումների ապահովմամբ՝ դրանով հավաքի կազմակերպվածության երաշխավորմամբ: Մասնավորապես հնարավոր է տեղադրվի՝ բեմահարթակ, կոնստրուկցիաներ, բարձրախոսներ, ձայնի ուժեղարարներ, թմբուկներ, լեդ էկրան, տրանսպորտային միջոցներ, էլեկտրասնուցման համար անհրաժեշտ մալուխ և այլ տեխնիկական սարքեր: Հնարավոր է տեղի ունենան ելույթներ, հնչի հանրային խոսք

6. Հավաքին կարգադրիչներ չեն լինի:

7. Հավաքի ընթացքում (20:00-ից) նախատեսվում է երթ՝ Հաղթանակի զբոսայգի – Կարապետ Ուլնեցու փողոց:

8. Հավաքի կազմակերպչի տվյալները՝ Ազգանուն Անուն Հայրանուն՝ Ալեքսան Բենիամինի Ալեքսանյան,

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հավաքը իրագեկման մեջ նշված ժամանակում և վայրում այլ, ներառյալ՝ հակադարձ ուղղվածությամբ հավաքի անցկացումն ինքնին հիմք չէ հավաքի նկատմամբ սահմանափակումների սահմանելու համար, եթե չկա դրանց մասնակիցների բախման անմիջական վտանգ: Տվյալ դեպքում ըստ ունեցած նախնական տվյալների այդ օրը նախատեսված չէ որևէ այլ անձի կողմից համապատասխան վայրում հանրային հավաք:

Նաև ցանկանում եմ տեղեկացնել, որ 2026 թվականի մայիսի 08-ի Հանրապետության հրապարակում կայանալիք հանրային հավաքի տեղի չի ունենալու, որը փոխարինել ենք սույն հանրային հավաքով:

Նաև խնդրում եմ դիմել ՀՀ պաշտպանության նախարարությանը հաշվի առնելով այն փաստը, որ ցանկանում ենք Մայր Հայաստան հուշարձանի վրա տեղի ունենա պրոյեկցիա և ստանալ ՀՀ ՊՆ-ից թույլտվություն

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Սույն իրազեկումը ընդունել ի գիտություն:

Կից ներկայացնում եմ անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը:

ՀԱՎԱՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԱԼԵՔՍԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

05/05/2026թ.